

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն, Тифлисъ, Редакция „Мшакъ“.

Կամ Tiflis, Rédaction „Mschak“.

Տ է Լ է Ք օ Ն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Ցայտարարութիւնները համար վճարում են
խաւարանիւր տողատեղին 10 կոպեկ.

Տ է Լ է Ք օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Մի գանգաւոր առիթով. — Ներքին Տեսչութիւն. — Մամուլ. Բազուի իրականութիւնից. Նամակ Բանուտից, Նամակ Արալայից, Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Պօլեւան Ատրպատականում. — Հեռագրութիւն. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՄԻ ԳԱՆԳԱՎՈՐ ԱՌԻԹՈՎ

Մի հին ցաւի մասին նորից խիստ գանգաւորներ են լուր գաւառից: Այդ հին ցաւը խոտի և հացի դէղերի հրդեհներն է, որ մի քանի տեղերում վերջին ժամանակներս սկսել է շատ յաճախ կրկնուիլ:

«Ազատեցէք մեր գիւղերը այս դժբաղդութիւնից» — գրում են մեզ Շիրակի շրջանից: Եւ բերում են մի շարք փաստեր իրականութիւնից:

Վերջին տարիների և շար թշնամութեան զգացմունքը այդ ձևով են լուծում հակառակորդների հետ հաշիւները մեր գիւղական շրջանում:

Ինչ միջոցով կարելի է մաքաւել մի այդպիսի դժբաղդութեան դէմ:

Բաղադրութեան հրդեհի դէմ մենք մաքաւում ենք ապահովագրելով կայունաձերները ապահովագրական ընկերութիւնների մէջ և, եթէ պատահում են հրդեհներ, մենք նրանց տուած վնասի փոխարէն ստանում ենք հաւասար արժողութեան մի գումար: Նոյնը անկարելի է անել հացի և խոտի դէղերի վերաբերութեամբ, որովհետեւ գոյութիւն ունեցող ապահովագրական ընկերութիւնները չեն վերցնում ապահովագրելու այդ առարկաները:

Բայց դուք կարելի լինէր մի փոխադարձ օգնութեան կազմակերպութիւն ստեղծել գիւղական շրջանում և այդպիսով կատարել ապահովագրական ընկերութիւնների դերը: Պարզեք մեր միտքը: Եթէ օրինակ մի գիւղ, կամ մի քանի գիւղեր միասին որոշում կայացնեն վարձատրելու ընդհանուր ոյժով այն գիւղացուն, որը դէղերը ենթարկված կը լինեն կրակի, այն ժամանակ գիւղական թշնամիները յետ կը կենան հրդեհելու սովորութիւնից, որովհետեւ անկարող լինելով ֆինանսի միջոցներ հրդեհի միջոցով, այլ ևս զրգում չեն ունենայ դիմել այդ անբարեխիղճ և անբարոյական վրիժառութեան ձեռն:

Եթէ գիւղական շրջանում կազմակերպվեն փոխադարձ օգնութեան այդպիսի հաստատութիւններ, այն ժամանակ գիւղացիները կընտելանային միմեանց օգնելու գործին, որը կարող էր աւելի ընդարձակ գործադրութիւն ստանալ նրա անտեսական կենսական:

Իսկ քանի որ գոյութիւն չունեն այդպիսի կազմակերպութիւններ, մնում է, որ գիւղական շրջանում գտնվող խոտի գնում և բանիմաց մարդիկ հասկացնեն ժողովրդին, որ հրդեհները միջոցով վրիժառութիւնը շատ ստոր և անբարոյական միջոց է, մանաւանդ վտանգաւոր այն պատճառով, որ նա յաճախ վարակելի ազդեցութիւն է գործում մարդկանց վրա և առաջին հրդեհից յետոյ երկան են գալիս մի շարք հրդեհներ և քանդվում է շատ շատերի անտեսութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ս Ս Ո Ւ Լ

Ամեն օր կարգում ենք և լուր, թէ ինչ յանցանքներ են կատարվում մեր շուրջը: Սովորել ենք համարել յանցանքները մարդկային կեանքի անխուսափելի երևոյթներ: Ինչպէս չէ կարող լինել կեանք առանց մահերի, այնպէս էլ անկարելի է երեւակայել ան-

գամ մի կեանք, որը ընթացքը կատարեալ «արդարութեան» մէջ լինի, առանց յանցանքների, առանց արեան և բռնութիւնների: Բայց թէ մահերի և թէ յանցանքների համար կայ այն հետաքրքրական հարցը, թէ որքան նրանք աճում են, որքան սպառնալից համաճարակի կերպարանք են ընդունում: Երբ մի հասարակութիւն չափազանց շատ զոհեր է տալիս մահին, մենք ասում ենք, որ այդ հասարակութիւնը ջնջվում է, որ նա այնքան անկարող է իր և կուտորական մարմին, որ ջարդվում է անխնայ, չէ կարողանում պահպանել իր անդամների առողջութիւնը: Իսկ ինչ պիտի ապացուցանէ յանցանքների անչափ աճումը, համաճարակի կերպարանք ընդունելը: Վաղուց անցել է այն ժամանակը, երբ յանցանքները համարվում էին անարդար մարդկանց, բարոյապէս փչացած անհատների գործ: Անկասկած, այս անհատական տրամադրութիւնն էլ գործ տեսնում է յանցագործութիւնների մէջ, բայց այժմ պարզված են և շատ ուրիշ պատճառներ, որոնք յանցագործների և յանցանքների են առաջացնում: Այդ պատճառները ունեն հասարակական բնույթ, առաջադրական պայմաններից, իրաւական հասկացողութիւնների անկատարելութիւնից, ժողովրդական կրթութեան պակասութիւնից, Հետեւաբար և յանցանքների թիւի մեծանալը կարող է մի շատ հաստատ երևոյթ դառնալ, որ ցոյց է տալիս, թէ ինչ զրգում են մէջ է այս կամ այն հասարակութիւնը, ինչ պակասութիւններից է նա տառապում և այլն:

«Рыс. Вѣд.» լրագրի մի աշխատակցից, հիմնվելով ոչ թէ վիճակագրութեան, տարեկան թանկանքների, այլ լրագրական տեղեկութիւնների վրա, հասնում է այն եզրակացութեան, որ ընթացիկ կեանքը իր փաստերով ցոյց է տալիս անփոփոխ, որ բարբերի կոպտութիւնը գնալով տեղի չէ տալիս աւելի կանոնաւոր յարաբերութիւնների, այլ զարգանում է, նորանոր արտայայտութիւններ է առնում: Իսկ թէ ինչու պէտք է առհասարակ բարբերի կոպտութեան մասին խօսել և ոչ ուրիշ պատճառների մասին, որոնք յանցանք են ծնեցնում, այդ ուս հրապարակախօսը բացատրում է այսպէս.

Կարող են ասել, թէ յանցագործութեան աճումը անխուսափելի է դժբաղդութիւնների տարիներում, ուստի և այժմ մենք պէտք է սպասենք, թէ գոյութիւնների և աւազակութիւնների թիւը կը բազմապատկվի: Ես, ի հարկէ, չեմ ուզում հերքել հասարակական կեանքի այդ օրէնքը, բայց դրա հետ միասին համոզված եմ, որ միայն դրա մէջ չը պէտք է որոնել այս տխուր երևոյթի պատճառները, այնպիսի դժբաղդութիւններ, ինչպէս են պատկերազօր, անբարբորութիւնը, պէտք է որ ամենից առաջ ազդէին սոցիալականութեան դէմ գործած յանցանքների թիւի վրա. և սակայն գաւառական տարեգրութիւնը ամեն օր հարստանում է մի հագին շարք լուրերով այնպիսի իրաւագիտութիւնների մասին և վայրենացման այնպիսի փաստերի մասին, որոնց մէջ առաջին տեղը զբաղում են ոչ թէ թալանի և գողութեան իրաւախախտներ, այլ բոլորովին ուրիշ հակումներ և ձգտումներ:

Այդ հակումները, ինչպէս կարելի է իմանալ աշխատակցի բերած բազմաթիւ փաստերից, ցոյց են տալիս ուղղակի, որ հասարակութեան բարբերն են վայրենանում: Եւ երբ միանգամայն պարզ է այդ հանգամանքը, ինչ պէտք է անել: Պատիժները, ոստիկանական միջոցները չեն, որ պէտք է պակասեցնեն յանցանքների թիւը: Հարկաւոր է դատարարականութիւն:

Կոյրը այդ հագին շարքի դէմ անհրաժեշտ է. բայց այդ կոյրը պէտք է տանել բոլորովին ուրիշ կարգի միջոցներով — ամենալայն կրթական միջոցներով, որոնց մէջ յատկապէս զգուշացնելու պէտք է մանկան հասարակութեան բոլոր խաւերի մէջ, պիտի առաջին տեղը դրաւ:

Ցաւը բժշկելի է, երբ նա հասկացվում է գրականապէս: Անբնական, անարդար երևոյթները ծնեցնում են համապատասխան ցաւեր:

Բայց կարելի է ասել, որ յանցագործութիւնների բոլոր տեսակների դէմ ամենազլխաւոր միջոցներից մէկը դատարարականութիւնն է և միայն դատարարականութիւնը:

ԲԱԳՈՒԻ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Ինչպէս յայտնի է, Բարձրագոյն հրամանով Բագու է ուղարկված կոմս Շուալովը՝ աշակցելու և հսկելու խօլերայով դէմ ձեռք առած և ձեռք առնվելու միջոցների վրա: Ահա մօտ մի շարքով է, ինչ կոմսը, իր հետ ունենալով պրոֆեսոր Համոյէյին, շրջում է քաղաքը և նախաձեռնում:

Այսօր, սեպտեմբերի 8-ին, ժամը 12-ին նշանակված էր սանիտարական-գործադիր մասնաժողովի արտակարգ նիստը՝ մասնակցութեամբ քաղաքի ձայնաւորների, բազմաթիւ կողմնակի հետաքրքրուողների և ներկայութեամբ՝ կոմս Շուալովի, նախադասւոյ իշխան Նակաշիձէի և պրոֆեսոր Համոյէյի:

Ժողովը բացվելուց յետոյ կոմսը համառօտ կերպով պատմեց իր 1892 թիւն Օդէսայում ժամանալու դէմ կոտորելու գործունէութիւնից և այդ քաղաքի ձեռք առած միջոցների մասին, որոնց ամենաակաւն մասը հետեւեալն է. միջոցներ ձեռք առնել, որ իւրաքանչիւր հիւանդ-դաշուկի մասին անմիջապէս տեղեկութիւն տան բժշկական մարմիններին: Երկրորդ, անմիջապէս միջոցներ ձեռք առնել վարակման համար անվտանգ դարձնելու համար այն տեղը, որտեղ հիւանդանոցներ դէպք է եղել: Երրորդ, անմիջապէս ամենախիստ միջոցներ ձեռք առնել հիւանդի ընտանիքում առողջներին կղզիացնելու և ենթարկելու՝ այդ առիթի առանձնապէս պատրաստած բնակարաններում և, չորրորդ, ուժեղացնել խոտորանական միջոցները այնպիսի, որ հարկաւոր լինի անմիջապէս ախտահանել այն տեղերը, որտեղ անհրաժեշտ են գտնվում:

Նոյն բանը հաստատեց և պրոֆեսոր Համոյէյը, որը առանձին ուշք դարձրեց բակտերիոլոգիական հետախուզութեան վրա, որպէս զի հարաւոր լինի ամենաճիշդ կերպով որոշել, թէ այս ինչ հիւանդը խօլերայով է հիւանդացած, թէ ոչ: Երկրորդ, այժմ, երբ քաղաքը յայտարարված է համարվում խօլերայով ընկած, — 8 սանիտարական բժշկանքի (9-ից մէկը խօլերայի բարակներում է գտնվում) թիւը հասցնել առնուազը 30-ի և ամեն շաբաթ գնել սանիտարական թաղական հոգաբարձուների թիւը 20—30-ից հասցնել 100—150-ի, ինչպէս այդ արվել է Օդէսայում, որտեղ գործելիս են եղել բացի մօտ 150 բժշկանքից և ֆելդշերներից, նաև 400 հոգաբարձուներ: Դրա համար պէտք է ընտրել մի գլխաւոր հոգաբարձու, որի ղեկավարութեամբ պէտք է գործեն բոլոր հոգաբարձուները. դրանց թիւը պէտք է լինի նոյնպիսի, որ իւրաքանչիւր ամեն օր կարողանայ այցելել իր թաղի բոլոր տներին:

Ապա իշխան Նակաշիձէն, խօսելով նոյնպէս սանիտարական միջոցների մասին, կոչ արեց քաղաքի բոլոր բժշկանքներին պատրաստ լինել կոտորելու խօլերայի դէմ, հակառակ դէպքում ինքը կը դիմի օրէնքի ոյժին:

Հէնց ժողովի վերջին յայտարարութիւնն անպիտան, որ առաւօտեան մի թուրք կին է վախճանվել խօլերայով, ինչպէս վկայում է մի բժշկի տուած տոմսակ և որ առաւօտանից փնտրում են և չեն իմանում, թէ ունից պիտի թողնուի խօլերայի դէմ, հակառակ դէպքում ինքը կը դիմի օրէնքի ոյժին:

Բայց կարելի է ասել, որ յանցագործութիւնների բոլոր տեսակների դէմ ամենազլխաւոր միջոցներից մէկը դատարարականութիւնն է և միայն դատարարականութիւնը:

Բագու.

ՆԱՄԱԿ ԲԱՆՈՒՄՈՒՄ

Օգոստոսի 27-ին

Հարաւային Ռուսաստանի երկաթուղիական գծերի ուղղութեամբ տարեց տարի բազմանում է հայերի թիւը: Այս կողմերում ճանապարհորդող յաճախ պատահում է նոյն իսկ աննշան և յետ ընկած երկաթուղիական կայարաններում առևտրական հայերի, որոնք երկու, երեք և աւելի թիւով ցրված են այս կամ այն կայարանում, այս կամ այն քաղաքում և գիւղում:

Բանուտը լինելով գաւառական վաճառականական մի քաղաք, կարճ ժամանակի ընթացքում իր մէջ հիւրընկալել է մօտ 20 հայ ընտանիքներ, որոնք համարեա բոլորը պարագուս են վաճառականութեամբ, մեծ մասամբ մանուֆակտուրային առևտրով: Բանուտից ոչ հեռու գտնվող Սլավեանսկ քաղաքում ևս բնակվում են 10-ից աւելի հայ ընտանիքներ: Սակայն այս կողմերում համեմատաբար ամենաշայտաւոր քաղաքը Բազում է, որտեղ արդէն հայերի թիւը հասնում է 40 ընտանիքի: Վերջինից բոլոր ցրված հայերը մինչև այժմ չունեն սոցիալական կեանքի կամ աղօթատուն, չունեն նաև ծխատէք բանանայ և հովում էին Նոր-Նախիջևանի բանանայների ծածկանակի ընթացքում միայն կամենակապ և Լուգանսկ քաղաքների հայերը թիւով այնքան բազմացան, որ հնարաւորութիւն ունեցան սոցիալական աղօթատուններ և ծխատէք բանանայներ ունենալու, որոնք հովում են նաև մօտ տարածութեան վրա գտնվող հայերին: Միւսում էին Բանուտ, Սլավեանսկ, Բազում քաղաքների և շրջակայ տեղերի հայերը, որոնք գտնվելով Նոր-Նախիջևանից բաւական հեռաւորութեան վրա, դժվարութեամբ էին կարողանում իրանց հոգևոր պէտքերը լրացնելու Նոր-Նախիջևանից եկող բանանայների ձեռքով, մանաւանդ որ դա ներթափանցաւ զգալի էլ էր լինում չբաւոր դատակարգի համար:

Սակայն սրանից երկու տարի առաջ Բանուտ ևս ունեցաւ իր ծխատէք բանանայ և թէև դեռ չունի մշտական աղօթատուն, սակայն առ այժմ ծխատէք բանանայի բնակարանում սենեակներից միւրը յատկացված է աղօթատան համար: Այդ բանանայի հովում էին նա յանձնված նաև Սլավեանսկի և Բազումի հայերը: Բայց որովհետև յիշեալ 3 քաղաքներից համեմատաբար ամենահայաշատը Բազումն է, որ ունի 40 հայ ընտանիք, ուստի և ցանկալի է, որ յիշեալ 3 քաղաքների հայերը, ունենալով մի ընդհանուր ծխատէք բանանայ՝ միասնալով ձեռնարկէին Բազումում մշտական աղօթատան հիմնադրութեան, որը կը լինէր նաև ծխատէք բանանայի բնակութեան տեղը: Յուսով ենք, որ այդ գործի մէջ նրանց օգնութեան կը հասնէին նաև շրջակայ ցրված հայերը, որոնք բոլորն էլ շահագրգռված են այդ անհրաժեշտ գործում:

Դրանով թէ վերջ գրված կը լինէր կարևոր դէպքում Լուգանսկ կամ Նոր-Նախիջևանի դատարանի ղեկավարութեանը և թէ յիշեալ տեղերի հայերը կը կարողանային առանց ներթափան մեծ գոհգոլութեան անթերի կատարել տալու իրանց բոլոր հոգևոր պէտքերը:

Յ. Աբրահամեանց

ՆԱՄԱԿ ԱՆԱՆՑԱՅԻՑ

Սեպտեմբերի 6-ին

Կիրակի, սեպտեմբերի 5-ին, քաղաքի հասարակական կուրբի դահլիճում տեղի ունեցաւ դերասան Արմէնեանի երկրորդ ներկայացումը իր կնոջ Կ. Դուրան-Արմէնեանի և տեղական սիրողների մասնակցութեամբ: Այս անգամ լրագրին Ջուդեթեանի «Փրօքիցէն», 1 արարուածով դրաման և «Տէր-Գրիգորեանի

«Դաժնակիւն անո՛ր» 3 արարուածով դրաման: Դաժնակիւն անո՛ր է ծայր լիւն էր երկուսն հա- սարակութեան: Խաղը ընդհանրապէս անցա- լաւ և աղողակ: Հասարակութիւնը բուն ու- անվերջ ծախսարարութեամբ իր գոհունակու- թիւնը յայտնեց զերասաններին և զո՛ւ սրտով հեռացաւ դաժնակից: Ներկայացումից յետոյ տեղի ունեցան ժողովրդական պարեր, որոնք տեղեցին մինչև զինչերվայ ժամը 2-ը: Ներկա- յացումից յետոյ ամառային կլուբի դահլիճում սիրողները մի ընթերցում պատուեցին զերա- սան պ. և տիկին Արմէնեաններին, որ տեղեց մինչև առաւօտ: Ինչպէս լսում ենք, պ. Արմէ- նեանը մտադիր է Ախալքալայից գնալ Դեր- քանդ, Ատրաքսան, Մոսկով, Պետերբուրգ և ապա Նոր-Նախիջևան, իր պաշտօնատեղին, ներկայացումներ տալու:

Սօլերայի գէտ մաքառելու պատրաստու- թիւնները մեղանում դեռ ևս շարունակվում են: Բաղաքիս զանազան անկիւնները տարի- ներով զիջված աղբերն ու կեղտերը քիչ շատ մաքրեցին: Բանի տարի է, որ անհրաժեշտ հազը էր դառն մեղանում շուկաներում ու յարմարաւոր փողոցներում հասարակաց ար- տաքանդներ շինելը, սակայն մինչև օրս չէր իրագործված: Սակայն այս օրերս խօրհայի սպանալիքի տակ քաղաքային վարչութիւնը ստիպված շինել տուեց մի քանի հասարակաց արտաքանդներ յարմարաւոր շուկաներում: Այժմ քաղաքը բաժանված է 12 սանիտարա- կան թաղերի, որոնց մաքրութեան հսկում են առանձին սանիտարական խմբեր, թաղային հողաբարձունքի ղեկավարութեամբ: Այս օ- րերս ժողովրդեան ձրի բաժանվեցին կովկա- սեան հայտերական բժշկական ընկերութեան հրատարակած՝ բժ. Վ. Արծրունու «Հանրա- մատչելի խրատներ խօրհայից պաշտպանվե- լու» բրոշիւրը և զրքեր, տեղական լիզու- ներով:

Թէ որքան մեր ժողովուրդը սնտիապաշտ է, կարելի է գաղափար կազմել հետեւեալից: Այս օրերս մի քանի տղետ կանայք հաւա- տացրել են, որ իրանք տեսել են, թէ լոյս է իջել քաղաքիս Ռաբրիթ թաղում գտնված վրա- ցայտո հայ կաթօրիկների ս. Աստուածածնի եկեղեցու գմբէթի վրա (Սիւլի-Բիլիսայ): Այս յիմար լուրը տարածվելով մեր ժողովրդի մէջ, հետաքրքրութիւնից և ջերմասիրութեա- նից գրգռված այժմ ամեն օր խումբ խումբ գնում են այդ եկեղեցու մօտ տեսնելու երկ- նային լոյսը: Ասողիներ կան, որ տեսել են ս. Աստուածամայրը ս. Մանուկը գրկին և այլ զառանցանքներ: Մարդ չը գիտէ ծիծաղել, թէ ցաւել այս աստիճան տգիտութեան և սնո- տիապաշտութեան վրա:

ՆԵՐՖԻՆ ԼՈՒՐԵՐ

Սեպտ. 9-ին Կովկասի դպրոցական շրջանի հողաբարձուն Թիֆլիսի քաղաքային վարչու- թեան ուղարկեց ժողովրդական լուսաւորու- թեան մինիստրից ստացած շրջաբերականը, որով առաջարկված է ձեռք առնել հետեւեալ միջոցները Միապետի կամքի համաձայն. 1) Բարձրագոյն Անուան ստիպէնդիանները յատ- կացնել ուսու-հասօնական պատերազմում սը- պանված օֆիցէրների զաւակներին: 2) Նոյն երեխաներին ազատել ուսման վճարից և զըտ- րոցների ունեցած մասնաւոր միջոցներից տալ նրանց թոշակներ: 3) Նրանց յատկացնել մասնաւոր ստեղծողներին եթէ այդ մասին եղած կանոնները հակառակ չեն դրան 4) դա- սազրքեր և ուսումնական պիտոյքներ տալ նրանց: 5) գոյութիւն ունեցող օժանդակ ընկե- րութիւններին և հողաբարձունքներին առաջար- կել օգնել այդ երեխաներին իւր կատարուած Բարձրագոյն կամքի, 6) բանակցութեան միտ- նել ազնեականութեան ներկայացուցիչների հետ, ջանալով որ զնուակահանքի պանսիօն- ներում ընդունեն այդ երեխաներին կամ նրանց թոշակ տան, 7) բանակցութեան մտնել քա- ղաքների և զեմաստիսներին նոյնպէս և մասնաւոր դպրոցների տէրերի հետ և իմանալ, թէ հնա- բուրդ չեն համարում նրանք իրանց դպրոցնե- րում կրթել այդպիսի մի քանի երեխաներ կամ ձրի, կամ մասնաւոր և կամ պետական գանձարանի տուած օժանդակութեամբ և 8) մեռած օֆիցէրներին և զինուորների երեխանե- րի մուտքը միջնակարգ և ստորին դպրոց ներում հեղատոյնելու համար, ընդունել նրանց առանց մրցութեան ենթարկելու, միայն բա- ւարար թուանշաներով: Ուղարկելով մինիստրի այս շրջաբերականը Թիֆլիսի քաղաքապետին, հողաբարձուն խնդրում է հաղորդել իրան, թէ ի՞նչ շահով կարող է Թիֆլիսի օգնել ներկայ

պատերազմում մեռած անձերի զաւակներին խնամելու գործում:

Դերքանդի մօտ Բէրբեռայի նաւթային շրջա- նում մինչև այժմ կային միայն երկու նաւ- թահորեր, իսկ այժմ տեղական «Խ. Օ.» լրա- գրին հեռագրում են, որ անդլիայի դրամա- տէր Հօրվէյի փորել տուած երրորդ նաւթա- հորը 214 սաժէն խորութիւնից շատուան է խիւի և նաւթն էլ լաւ յատկութիւններ ունի:

Մէնակի բաժնի հաշտարար դատարը Լա- կելիլը նշանակված է Կարսի բաժնի հաշտա- րար դատարը:

Ռուսական Կարմիր Սաչի նահանգական վարչութիւնը մեզ խնդրում է տպագրել, որ անցեալ օգ. 15-ից մինչև սեպտեմբերի 1-ը Կարմիր Սաչը պատերազմական ժամանակի կարիքներին, որոնք և այլքներին և նաւա- տորմը ուժեղացնելու համար ստացել է նախընթաց նուէրների հետ միասին 85895 ռ. 27 կ., որի հետ հաշուելով 600 ռ. բէնտան, գումարը կազմում է 86,496 ռ. 27 կ.:

Թիֆլիսի նահանգի ժողովրդական դպրոց- ների վերատեսուչը դիմել է Թիֆլիսի քա- ղաքային վարչութեանը և խնդրել, որ ուսման վճարից ազատվեն այն երեխաները, որոնց հայրերը կամ սպանվել կամ վիրաւորվել են ներկայ պատերազմում. նոյն մտքով դիմում արել է և Թիֆլիսի Ի իգական գիմնազիայի վերատեսուչը:

ՍՍԱԽՐՊՈԼԻՑ՝ մեզ գրում են. «Այսօր, սեպտեմբերի 6 ին, Ստաւրօպոլ ժամանեց ար- դարադատութեան մինիստր Մուրադիէվ, որը երէկ անձամբ բացել է Նօվօհրեկասկի դա- տաստանական նոր պալատը: Այսուհետև այդ նոր պալատին պիտի ենթարկվեն Ստաւրօպո- լի նահանգի և Կուրանի շրջանի բոլոր դատա- կան հիմնարկութիւնները, որոնք մինչև այժմ գտնվում էին Թիֆլիսի պալատի տեսչութեան տակ: Ահա այդ առիթով պ. մինիստրը ան- ձամբ ըննում է այստեղի դատական հիմնար- կութիւնները»:

ԱՆԱՅԻՆԱՅԻՑ՝ մեզ գրում են. «Ծառապը- տուղների քաղը արդէն մեղանում սկսվել է: 2ը նայելով եղանակների տարօրինակութեան ու անկանոնութեան, այս տարի մրգերի ար- դիւնները թիւնք են որակութիւնը բաւական առատ է և լաւ, մասնաւոր խնձորը, որը կազ- մում է քաղաքիս առաջնակարգ արդիւնքը»:

ՍՄԱՆԻՑ՝ գիւղից (Ախալք. գաւառ) մեզ գը- րում են. «Գաւառիս դաշտավայրում հունձը արդէն սկսված է, իսկ Սարգիշ գիւղերում հացադոյրը դեռ կանաչ է: Այս տարի մեղա- նում ընդհանրապէս եղանակները շատ նպաս- տաւոր էին հացադոյսի համար. չէ անցել մի շաբաթ, որի ընթացքում մի երկու անգամ անձրև չը տեղար: Ահա այդ առատ անձրե- ների շնորհիւ հացադոյսը շատ աշող հունձ է խոստանում: Գիւղացիք օր առօր սրտատրոփ ու անհամբեր սպասում են որքան կարելի է շուտ ու անվնաս ներս հաւաքեն իրանց արիւն քրտիքի վատաւը—մի ամբողջ տարվայ պաշարը: Բայց դժբաղդաբար գաւառիս բոլոր գիւղերին վիճակված չէր այդ քաղաքը օրին արժանանալու. մօտ 10 գիւղերի ցանձօր գործնաց կարելի տին, հէնց այն ժամանակ, երբ պրտերը նորաբարսի նման զուգված զարգա- ված, սպասում էին հնձորի գալուն: Կարկու- տը մի քանի գիւղերում այնքան սաստիկ էր, որ բառիս բուն նշանակութեամբ գիւղացիք զրկվեցին իրանց ամբողջ ցանքայից: Դժբաղ- դաբար, ինչպէս երևում է նշաններէր, գա- ւառիս այս տարի այդքանով ազատվելու չէ: Սարգիշ գիւղերի ցանքը, որը դեռ կանաչ է և հազիւ թէ 20 օրից հասունանայ, երբ ար- դէն ցրտերը ու եղեմը կը սկսվեն, նա էլ պիտի գոհ լինի եղեմային: Բաղաւոր է միայն դաշտավայրի գիւղերի մի մասը, որտեղ հուն- ձը արդէն սկսված է և բերքը առատ: Ահա շնորհիւ այդ առատ բերքին՝ գարու ոսմարը, որը մի երկու շաբաթ առաջ ծախվում էր 9 ռուբլով, այժմ ծախվում է 6 ռ. 50 կոպէկով, այդպէս էլ ցորենն է էժանացել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԵՏԵՐՍԲԱՐԴԻ ԵՊԻՍԿՈՓ

Նօրն ամիս պատեալով

«Руч. Вѣд.» լրագրի շարունակելով իր յօ- ղուածը Ռուսաստանի անպատրաստութեան

մասին, որի առաջին մասը առաջ բերին Ե- րէկ, ասում է. «Արդե՞ք մեր անպատրաստու- թիւնը բոլորովին անխուսափելի էր և բնա- կան: Ասում են, որ նա հետեւանք էր մեր խա- ղադասիրութեան և անկեղծ ոչ-ցանկութեան պատերազմելու ճապօնիայի հետ: Բայց չէ որ միջազգային յարաբերութիւնների մէջ պէտք է նկատի ունենալ ոչ թէ այն, ինչ որ մենք ցանկանում ենք և մտածում, այլ այն բանը թէ ինչի են ձգտում և ինչ են մտածում օտար պետութիւնները, որոնց հետ մեզ վի- ճակված է յարաբերութիւններ ունենալ կամ զրացրինք իրենի: Թէև Ռուսաստանը և ցան- կութիւն չունէ կուռ Գերմանիայի և Աւստ- րիայի հետ, թէև նա գտնվում է նրանց հետ ամենաբարեկամական փոխադարձ յարաբե- թիւնների մէջ, այդ բոլորը արգելք չէ սա- կայն, որ նա ունենայ շատ զօրք իր արեւմ- տեան սահմանի վրա և ամբողջ Եւրոպան հա- մարում է այդ բոլորովին բնական: Սակայն Հեռաւոր Արեւելքում անհրաժեշտ էր գտնվիլ գործողութեան ուրիշ եղանակ բռնել: Գրաւե- լով մի ահաբէն երկիր, միջամտելով Կորէայի գործերին, մտնելով Ճապոնիայի հետ լարված յարաբերութիւնների մէջ, հարկաւոր չէին հա- մարիլ կենսոնացնել Հեռաւոր Արեւելքում բաւականաչափ զօրք թէ պահպանելու համար հարկաւոր հեղինակութիւնը, թէ պահպանելու համար խաղաղութիւնը, իսկ անապագային դէպքում—խափանելու թշնամուն ցամաք իջ- նիլ կամ գտնէ յետ կանգնեցնել նրա արշա- ւանքը մինչև ոյժերի հասնելը. Անշուշտ, այդ բանը չարմից որ և է լուրջ նկատուեցնելով և հաւանօրէն այն պատճառով, որ ենթադրում էին, թէ Ճապոնիան չի վստահանայ անիլ այն բայը, որը նա արեց և իրագործեց:

Այդպիսի սխալ ենթադրութիւնը, անշուշտ, հիմնված էր այն բանի վրա, որ կամ Ռուսաս- տանը չը գիտէր Ճապոնիայի սպառազինու- թիւնները մասին, կամ, եթէ գիտէր, նշանա- կութիւն չէր տալիս նրանց, համոզված լինե- լով, թէ Ճապոնիան չի համարձակվի Ռուսաս- տանի պէս մի առաջնակարգ պետութեան հետ կռուելու: Որովհետև Ճապոնիայում կային ուս- սական դեպպանութիւն, ուսաց զինուորական կցորդներ, հիւպատոսներ, հաւանօրէն նաև խուզարկուներ, ուսով, թվում է թէ մեր իշ- խանութիւնները պէտք է լաւ տեղեակ լինէին Ճապոնիայի զինուորական ոյժերի, կատարվող պատրաստութիւնների, ինչպէս և եապոնա- կան կառավարութեան ու հասարակութեան տրամադրութեան մասին: Մեր մամուլի մէջ կարծիքներ յայտնվեցին, թէ մեր դիպլոմա- տիան իր կոչման բարձրութեան վրա չէ կանգ- նած, բայց դրա հերքումն ևս երևաց, որ հաս- տատում էր, թէ ընդհակառակը, մեր դիպլո- մատիան իր ժամանակին միշտ ճշգրիտ տե- ղեկութիւններ է հաղորդել, սակայն նա մե- ղաւոր չէ, եթէ նրա հաղորդած տեղեկութիւն- ները հարկաւոր կերպով նկատողութեան չեն առնվել: Դրանից այժմ, թէ ով իրաւունք ունի ներկայ դէպքում, մենք, ի հարկէ, չենք կա- րող. մի բան միայն հաստատ է, որ եապոնա- ցիները աւելի մանրամասն և ճիշդ տեղեկու- թիւններ ունենին, քան մենք: Մի շաբթ տարի- ների ընթացքում եապոնական գործակալները մանրամասն ուսումնասիրում էին Կորէան և Մանչուրիան և այդ երկրներին զանազան պայմանները, մի և նոյն ժամանակ նրանք հա- ւաքում էին մանրամասն տեղեկութիւններ մեր զինուորական ոյժերի, Միլիտի երկաթուղու փոխադրական կարողութեան մասին, այնպէս որ եապոնական կառավարութիւնը կարող էր մանրամասն կերպով հաշուել Ռուսաստանի հետ ունենալիք պատերազմի բոլոր շանքերը և այդպիսի պատերազմի համար անհրաժեշտ ոյժերի և միջոցների ամբողջ քանակութիւնը: Ճապոնացիները, օրինակ, շատ լաւ գիտէին մեր նաւատորմի թոյլ կողմերը և համոզված էին, որ աշող կերպով ափ կիջնեն, կը կարու- դանան զրաւի Կորէան և խուժել Մանչուրիան աւելի շուտ, քան մենք կարող ենք հաւաքել հարկաւոր պաշտպանողական ոյժերը: Նրանց յայտնի էին մեր զօրքերի քանակութիւնը և շարժումները:

Սակայն մենք այդպիսի մանրամասն տեղե- կութիւններ չունէինք Ճապոնիայի ոյժերի, միջոցների, ժողովրդի ոգու և տրամադրու- թեան մասին: Գնդապետ Բօգուսլավսուե Նա- պօնիայի մասին հրատարակած յայտնի գրքի մէջ (1904), որ օգտվել է մեր գլխաւոր շտա- բի տեղեկութիւններով, ասված է, թէ եապո- նական մնայուն զօրքերի թիւը, պահեստիների հետ հասնում է 231 հազար մարդի, թէ հե- ծեղազօրք միայն 10.000 է, այն ևս վատ է: Թէ արտիլերիայի մէջ 684 թնդանօթ կայ,

թէ ցամաքային բանակը չը պէտք է 122 հա- ղար հողուց աւելի լինի, նա էլ սահմանված է միայն պետութեան սահմանների պահպա- նութեան և մնայուն զօրքի պակասորդը լրաց- նելու համար: Իրականութեան մէջ յայտնվեց սակայն, որ եապոնացիները ուղարկել են Մանչուրիա կէս միլիօն զօրք, որ նրանք ու- նեն հեծելազօրք, ընտիր աւստրալիական ձիե- րով, որ նրանց արտիլերիան աւելի բազմա- թիւ է: Ամենանոր ժամանակում, «Руч. Вѣд.» լրագրի արդէն հաղորդում է, որ Ճապոնիան կենտրոնացրել է հարաւային Մանչուրիայում և Կվանտունում 500,000-ից «ոչ պակաս, իսկ գուցէ նաև աւելի» և որ, ունենալով մօտ 300 հազար պահեստի և մօտ 500 հազար ա- ռաջին կարգի բեղերվի զօրք, նա համարձակ կարող է դուրս հանել միլիօնաւոր բանակ, ու- նենալով դեռ երկրորդ կարգի պահեստ: Պէտք է սակայն նկատել, որ Ճապոնիայի դուրս հանած պատերազմական ոյժերը Եւրոպայի համար ևս անակնկալ հանդիսացան իրանց քաջութեամբ: Դա բացատրվում է եւրոպական պաշտօնական լրագրիչների զգուշատրութեամբ, որ դիմամբ նուազեցնում էին իրանց ուղ- մական ոյժերի մասին տեղեկութիւնները, թէև այն հանգամանքը, որ Ճապոնիան ունի 45 միլիօն ազգաբնակչութիւն և ընդհանուր պարտադիր զինուորական ծառայութիւն, թոյլ է տալիս չը զարմանալ այդ թուի վրա, ինչ որ թիւրբական պատերազմի ժամանակ Այդ ժա- մանակ ևս համարում էին Թիւրքիան թոյլ, յաղթութիւնը նրա վրա՝ հեշտ, իսկ իրակա- նութեան մէջ պէտք եղաւ լարել բոլոր ոյ- ժերը թշնամուն յաղթելու համար: Բայց չէ որ Ճապոնիան Թիւրքիայի հետ չէ. նա այն- քան ժողովուրդ ունի, ինչքան Գերմանիան և նրա զինուորական կազմակերպութիւնը, անկաս- կած շատ և շատ բարձր է թիւրքականից: (P. B.)

ԽՈՒՆԻՍԻ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ

(Նամակ Թարգիւղից, սեպտ. 2)

Շնորհիւ Պարսից կառավարութեան անտար- բերութեան և ամբողջ տգէտ տրամաբանու- թեան, թէ «ճակատագրի եղածը պէտք է լի- նի», խօրհրան մուտք գործեց նաև Ատրպա- տական:

Երբ խօրհրան նոր էր սկսվել Թէհրանում, Կովկասը մեծ պատրաստութիւններ էր տես- նում, նախազուշտութիւններ էր ձեռք առնում անկոչ հիւրի մուտքը խափանելու համար, իսկ Ատրպատականի կենտրոնում—Թաւրիզում հայերը փախչում էին միայն մի բանի տա- նակ վերստ հեռու գտնվող, բայց աւելի վատթար կեղտոտութեան մէջ թաղված Մու- ժաբար գիւղը, իսկ պարսիկները ծաղրում էին հայերի այդ վարմունքը, և իրանք ամեն կերպ աշխատում էին հեղքել Թէհրանում հա- մաճարակի տարած հազարաւոր զոհերը, հա- ւատացնելով ժողովրդին, որ միայն մի քանի մեծնոյններ են եղել, այն էլ ուրիշ հիւանդու- թիւններից:

Մի փորք ի շատէ կրթված սէյիւ կառավա- րութեան կողմից ենթարկվում է խիստ պատ- ժի, ձեծվում է և երեք հարիւր թուում տու- զանքի ենթարկվում այն սեղրի համար, որ համարձակութիւն է ունենում արտահանիչ զեղ սրսկելու իր խանութի առաջ և զբանով «մոլորեցնում ամբողջին»:

Թէհրանում հիւանդութիւնը խիստ տարած- ված ժամանակ, այնտեղ եղած 800-ի չափ մարդացի սարաքանքը թոյլտուութիւն են ստանում հայրենիք վերադառնալու: Ե լերա- հետ ունենալիք պատերազմի բոլոր շանքերը և այդպիսի պատերազմի համար անհրաժեշտ ոյժերի և միջոցների ամբողջ քանակութիւնը: Ճապոնացիները, օրինակ, շատ լաւ գիտէին մեր նաւատորմի թոյլ կողմերը և համոզված էին, որ աշող կերպով ափ կիջնեն, կը կարու- դանան զրաւի Կորէան և խուժել Մանչուրիան աւելի շուտ, քան մենք կարող ենք հաւաքել հարկաւոր պաշտպանողական ոյժերը: Նրանց յայտնի էին մեր զօրքերի քանակութիւնը և շարժումները:

Մարալիս Թաւրիզից հեռու է միայն 150 վերստ. օգոստոսի 31-ին Մարալայից եկած պատի կառավարն հիւանդացաւ. բժիշկները հաստատեցին, որ խօրհրա է, բայց դէպի լաւն է դնում և առ այժմ ուրիշ դէպք չէ ե- հետ հասնում է 231 հազար մարդի, թէ հե- ծեղազօրք միայն 10.000 է, այն ևս վատ է: Թէ արտիլերիայի մէջ 684 թնդանօթ կայ,

հել, որովհետև միշտ պակաս են ցոյց տալիս «Ժողովրդի սիրտը վախ չը գցելու համար»։ Մարադա բժշկներ են գնացել օգնութեան, բժշկներ թուում է եղել նաև մի պարսիկ բժիշկ, որը հենց քաղաք հասած օրը նոյն կտորով յետ է փախչում։

Ջուլֆա գնացել են բժիշկներ իրանց օգնականներով կարանտինա հաստատելու։

Թաւրիզում աւրում է սարսափը, նախապատրաստութիւն և գործունէութիւն առայժմ չը կայ։

Շնարի

«ՄՇԱԿ» ՀՅՈՒՍԻՍՏՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

8 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ Գեներալ-ադիւտանտ Կոնստանտին Կոնստանտինովիչը Նորին Կայսերական Մեծութեան Անունով սեպտեմբերի 8-ից. «Զօրքի հարաւային ճակատի վրա փոխադրութիւններ չը կան։ Ստացված զինուորացիների համեմատ, սեպտեմբերի 7-ին Եսայիսեան լեռնանցքի վրա մեր զօրաբաժնի ունեցած կուռի մէջ հակառակորդը երկու անգամ փորձելով յարձակում գործեց, ամեն տեղից յետ մղվել նշանակուող կորուստներով, այնպէս որ մեր վերջինքը մի քանի գերիներ և մի յայտնի քանակութիւն զէնքերի և ռազմամթերքների Մեր կողմից սպանվեց 1 օֆիցեր և 3 զինուոր և վերաւորվեցին մինչև 40 զինուորներ, որոնցից շատերն արդէն վերադարձան և մասն զօրքի շարքը։ Վերջինիս մասին ամենահպատակօրէն գեղուցանում եմ Ձեր Կայսերական Մեծութեան։

ԶիճՈՒ, 8 սեպտեմբերի (Բէյտէր)։ Աննա Կրավչենկո, ուսու օֆիցերներից մէկի ամուսինը, ժամանեց այստեղ այն նւումով, որով եկան իշխան Բաղդիվիլ և գնդապետ Սերստօֆօրով։ Վտանգը, երբ նաւը պատռելով անցնում էր, պաշարման դիմը, այնքան յուզել էր Կրավչենկոյին, որ նա միայն այսօր զգաստացաւ կրած յուզմունքից և համաձայնվեց ընդունելու «Բէյտէր» գործակալութեանը ներկայացուցիչին։ Տիկինը պատմում է, որ հիւանդանոցների ծառայողները բերդում մնացած կանանց աշակցութեամբ հրաշքներ են գործում։ Իւրաքանչիւր 1000 վիրաւորների համար 30 անսիրտարներ կան։ Կանայք մեծ մասամբ զբաղված են զգեստների պատրաստելով բերդապահ զօրքի զինուորների համար։ Զինուորները և չքաւոր բնակիչների կանայք լուսացը են անում և այգիսով վիրաւորները և հիւանդանոցները մաքուր հագուստներ ունեն։ Սարսափելի շքեր ժամանակ ունեն վարակիչ հիւանդութիւններ չը կային, բայց բերդապահ զօրքը և բնակիչները տանջվում էին կարմրագլուխ մեծ ճանճերի կծուութեամբ։ Այդ ճանճերի կծածը մահացու է։ Հիւանդանոցներում վիրաւորները արագութեամբ առողջանում են Մարսիմի ուսմանը, նրանց մի օսակի միտմանը հապտանային գնդակներից ստացած վէրքերից, բայց կան նոյնպէս վիրաւորներ, որոնց առողջանալն անկարելի է։ Նրանք բաղաւթը համարեա աւերված է։ Փողոցներում շատ երեկոյններ կան, բայց ուղեւորութիւնից սպանվածներ թիւը զարմանալի չէին։ Մի անգամ ես համբեցի 57 հապտանային ուսմանը, որ արձակեցին մեր մէջ բառարէպայի դէմ, որի ժամանակ ոչ մէկը նպատակին չը հասաւ։ Բերդապահ զօրքի ուղին հոյակապ է, չէ կարելի երևակայել իր աւելի քաջ մարդկանց գուժը։ Նրանք օրվայ ծառայութիւնից յետոյ խրամատներում, նրանք վերադառնում են երեկոյն։ Բնակչութիւնը և այդ հերոսների շարքերը նոսրացան, այնու ամենայնիւ նրանք անսահման վստահութեամբ են ներշնչված դէպի իրանց ոյժերը և համոզված են, որ կը պաշտպանեն բերդը։

ՏՕԿԻՐ, 7 սեպտեմբերի (Բէյտէր)։ Հեռագրի համաձայն, հետեակ զօրքի 4 բառայօնից և հեծելազօրքի չորս եսկադրօնից բաղկացած ուսուական զօրաբաժնի 8 թիւանոթներով յարձակում գործեց սեպտեմբերի 4-ին հապտանայինների վրա Սէյտայցի մօտ։ Կոնստանտինովիչը մինչև ցերեկվայ երեք ժամը, երբ ուսուները յետ մղվեցին։ Ռուսական կորուստները հաշուում են 57 մարդ։

ՏԵՆԻՍԻՆ, 8 սեպտեմբերի (Բէյտէր)։ Եսայիսեան մարտանաւները հեռացան Իսկուդից, Պորտ-Արտուրի վրա յարձակման մասնակցելու համար։ Կարծում են, որ այս անգամ շտաբով կորական կը լինի։

ԶիճՈՒ, 8 սեպտեմբերի (Բէյտէր)։ Վստահութեան արժանի աղբիւրները հաղորդում են, որ պաշտպանութեան գլխաւոր գծի վրա

հապտանայինների գրաւած ամրութիւնները երկրորդական մարտկոցներ են Ունիւնալի մօտ։ Նրանք գետեղված են էլիւնալի և Ստոնիւնալի մարտկոցների միջև և գրաւեցին մեծ շտաբով ժամանակ։ Այդ շտաբով մէջ, հապտանական օֆիցերների խոստովանութեան համաձայն, հապտանայինները կորցրին 15-ից մինչև 20 հազար մարդ։ Այդ մարտկոցները գտնվում են աւելի փոքր բարձրութիւն ունեցող տեղի վրա, քան նրանց հարեան ուրիշները։ Թեւեղ կատաղի անընդհատ արտիլերիական կրակը նրանց վրա արեց ամեն ինչ։ Նրանց գրաւող բերդապահ զօրքը մի անգամ կատարելապէս չնչկեց, ուրիշ զինուորներ միշտ կազմ և պատրաստ էին նրանց փոխարինելու։ Այդ ոչ-մեծ դիրքը պաշտպանում էին յամառութեամբ, որովհետև յոյս ունեն շուտով նրան հետեակ զօրքի արշաւան յենակէտ դարձնել, թէպէտ և անհրաժեշտ է ներկայանում այժմ և եթ գրաւել մարտկոցները, որպէս զի հապտանայինները կարող լինեն իրանց ձեռքում պահել իրանց ձեռք բերած յարմարաւոր դրութիւնը։ Ռուսները սակայն ամեն օր արձակում են հազարաւոր ուսմանը այդ դիրքերի վրա։ Եսայիսեանները մի ան ժամանակ չէին պատասխանում ռազմամթերքների պակասութեան պատճառով, որ տեղի ունեցան անհրաժեշտ ռազմամթերքների հասցնելու աշխատանքները, որոնցով արշաւում են հապտանայինները, վատ դրութեան մէջ են, մի քան, որ գոտարացանք և թիւանոթները հասցնելը։ Զինուորները շատ սիրում են Ստեպանիւն։ Արտուրում մնացած երկու հարիւր կանայքը համարեա բոլոր գթութեան քոյրեր են և աշխատում են տիկին Ստեպանիլի գեղականութեամբ։ Վճռել են նրանք չը հեռանալ բերդից և աշխատում են հերոսական անձնութիւններով։ Եսայիսեանները անհրաժեշտ հիւանդներ են, նա համարեա ոչինչ ծուխ չէ տալիս։ Թնդանութիւնը ճարպիկութեամբ քողարկված են։ Թաւայի լինական տները հապտանային բառարէպաների են վերածվում։ Ռուսները կազմակերպեցին հարցանաձիգ—կամուրներին խմբեր, նրանց պարտաւորութիւնն է միջի այլոց խուզարկել բերդների գաւիթայրերը և որոնել թշնամու թիւանոթները։ Այդ միջոցը աշտուկութեամբ պսակվեց։ Մաղապիւնները բերդի մէջ ծախճութեան համարեա բոլոր պարանքները, իսկ թէ որքան ուսուական պաշարների կան, հրաժարվում են տեղիկութիւնից իրար։

ՆԻԻ. ԵՐԻՐ, 9 սեպ. (Բէյտէր)։ Բուլնոս-Այրէսից ստացված հեռագրում ասված է, որ ծովային միւսիստը յայտարարում է, թէ Ռուսաստանի արգելախիտն 4 հատ պատրաստված մական նաւեր գնելու մասին եղած լուրը ոչ մի հիմք չունի։ Արգելախիտն նաւերից ոչ մէկը չէ ծախված Ռուսաստանին։

ՇԱՆԻՆԻՆ, 8 սեպտ. (Բէյտէր)։ Զինական լրագրիւնների տեղեկութիւնների համաձայն, Լէսսարե միջնորդում է, որ Զինաստանը ձեռք բերել մանջուրական երկաթուղին։ Սեպտեմբերի 7-ին Արտուրից եկելու մի չինացի ասում է, որ ուսուական էսկադրան հապտանայինների բերդն անընդհատ ամրակոծութեան պատճառով վճռել է այս շաբաթ դուրս գալ նաւահանգստից և փորձել պատռելով անցնել Յիլիւնալ—Վճռված է, որ «Ասիոյդի» և «Դրօզդօի» էկիպաժները կը մնան նաւերի վրա, նրանց թոյլատրված կը լինի ժամանակ առ ժամանակ մի ինչի։ Զինական մի պահակաւաւ խաբիսի նիտած կը կանգնի ուսուական նաւերից մի թիւ հետո։

ՏԵՆԻՍԻՆ, 7 սեպտ. (Բէյտէր)։ Մուկլէնի չինական կուսակալի բոլոր արժէքաւոր իրերը Պէկին են ուղարկված։ Մի քանի ուսուներ Սինսինտին այցելեցին։ Ներկայումս Մուկլէնից Սինսինտին ձաւորողներ համարեա անհնար է խուսափել յարձակութիւնների պատճառով։ Պուցնացիի մօտ գտնվում է մի հեծելազօրաբաժնի 700 հոգուց, որի նպատակն է զսկել խուսափողներին։ Զինական իշխանութիւնը գլխատել է 40 խուսափող։ Ռուսներին պաշարներ տանող ջոկանները ենթարկվեցին նրանց զօրեղ յարձակումներին։

ԼԱՍՊԱՆԻՆ, 8 սեպտ. (Բէյտէր)։ «Տերեկ» կրէյսէրը պահանջեց 1000 տօնի ամուլ, իր ամրապնդումը լցնելու համար։ ԲԵՆԻՐԱՆ, 8 սեպտ. (Կօմր. Բիւրօ)։ Թաւալումը շարժանները շտաբից օտար պետութիւնների ներկայացուցիչներին։ Պաշտօնական թերթում ներուսն է հրատարակված ընտրութիւնների ժամանակ յանցանքներ գործած, նոյնպէս և դատարանով 15 օր բանտարկութեան դատապարտված բոլոր անձներին։

ԲԵՆԻՐԱՆ, 9 սեպտ. (Վօլֆ)։ Գերմանական Կարմիր Ոստի ընկերութեան նիստը եղաւ,

որի մէջ քննվեց պատերազմի բեմում վիրաւորածներին և հիւանդներին օգնութեան հանելու հարցը։ Նախագահը լիազօրութիւն ստացաւ նախապատրաստելու ամեն բան, որպէս զի ուսուական և հապտանական Կարմիր խաչերի հետ միասին վիրաւորներին օգնութեան հասնին։

10 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ, 9 սեպտ.։ Հին Պետերօֆում Բարձրագոյն ներկայութեամբ օժից լէյթ-գվարդիայի գնդի եկեղեցին։ Սեպտ. 9-ին Վիլհելմ Կայսրուհու արձանի բացմանը Մեծ Իշխան Միխայիլ Ալեքսանդրովիչը գեներալ-մայոր Դաշկովի ուղեկցութեամբ։ Նորին Մեծութեան փոխարեան Հեռաւոր Արեւելքում սեպտ. 6-ին հետեակ հրամանն է տուել. «Կօնստանտինովիչ Իսաէնի ուղարկած զինուորումը ներկայացնելով Թաւալոր Կայսրին, ես պարտք էի համարել ամենահպատակօրէն վկայել օգ. 1-ին կրէյսէրական նաւաւորի պաշտօնեաների ցոյց տուած կարիճութիւնը ճակատամարտի մէջ. նորին Մեծութիւնը բարեհաճել էր երջանկացնել ինձ հետեակ հեռագրով. «Վալադիլուսով։ Գեներալ-ադիւտանտ Ալէքսանդրի։ Հալոյդեցիք իրիստիներին և Կարմիր խաչի անդամներին, և օֆիցերներին և կրէյսէրների կօմանդանտներին իմ սրտգին ճշմարտապաշտութեամբ և քաջ ցոյց տուած կարիճութեամբ, երբ նաւաւորներն են փառքեան հաւաքում օգ. 1-ին ունեցած նաւահանգստում հօգուալով քեմալու հետ։ Նրանք փառքաւ պաշտպանեցին Անդրի դրօշակի պախը։ Նիւ-ՎՈՒՍՅԱՆ։ Արքայական շնորհակալութեան բարձր-ողորմած բառերը թող ապագայում անձնուէր բաշխուին և անձնագրութիւն ներշնչեն ձեզ կատարելու ձեր պարտքը Թաւալորի և Կայսրի զինուորի վերաբերութեամբ։ Այս հրամանագիրը կարգաւ բոլոր նաւերի և ափերի վրա եղած կօմանդանտներին։ Ստորագրել է գեներալ-ադիւտանտ Ալէքսանդր։

ՇԱՆԻՆԻՆ, 8 սեպտ. (Բէյտէր)։ Ըստ ստացված տեղեկութիւնների, Զինաստանը ընդգրկում է անգլո-տիբեթական դաշնադրին, համարելով, որ դաշնագիրը մնա է հասցնում Զինաստանի վեհապետական իշխանութեան Տիբեթի վերաբերմամբ։

ԶիճՈՒ, 8 սեպտ. (Բէյտէր)։ Եսայիսեանները կատարելու են ամրութիւնների գեծ Արաւու խորշից մինչև Դաւուդան։ Ռուսաց ամրութիւններին ամենամօտ ամրոցը գտնվում է 4000 մետրով հեռու ուսուաց ծովափնային բանակատեղից։ Յայտնի վաճառական Կրատցը եկաւ Պորտ-Արտուրից։ Ուսուացութեան ժամանակ նա պատմում, թէ տեսել է ծովում Միսոգլաո կղզիների բարձրութեան վրա 150 ջոկաններ, բեռնված ուսուացային մթերքներով, որոնք գնում էին Նիւ-Չուան։ Կրատցի խօսքով, օգոստոսի 28-ից մինչև սեպտ. 4-ը Պորտ-Արտուրի մէջ ոչ մի ուսուց չէ ընկել։ Նա ասում է, որ ամենի սրտերը գեներալ Ստեպանի սրտի հետ տակտով խփում են։ Ամենքը խոստովանում են, որ նա միակ մարդն է, որ կարող է ազատել դժուար դրութիւնից։ Փողոցներում յաճախ կարելի է տեսնել նրա բարձր դէմքը։ Երբ Ստեպանը գնում է դիրքերի վրա, նա հաճվում է բոլորովին պարզ ժողովրդի մէջ խօսում են, որ գեներալը երբեք չէ քնում։ Աւարտելով վարչական աշխատութիւնը, գեներալ Ստեպանը երեկոյանները այցելում է մարցնելու և քնում է։ Երբ է մի պատնէլի վրա։ Իր ամուսնու ուղեկցութեամբ նա ման է գալիս հիւանդանոցները, զիմելով հիւանդներին կարեկից խօսքերով։ Գծի վրա կուր ժամանակ Ստեպանը մշտ յայտնի տեղ է գրաւում։ Եթէ զինուորներին ի դուրս կանգնած օֆիցերը ընկնում է, գեներալը ինքն է առաջնորդում զինուորներին յարձակման, որը, այդ դէպքում, միշտ աշտ է։ Նրա կանոնը այսպէս է. «այն, ինչ որ ես հրամայում եմ, կատարելի է»։

Ա.Ի.ՆԻ, 7 սեպտ. (Բէյտէր)։ «Սուրիսկ» և «Պետերբուրգ» նաւերը տեսնել են Սուէզի ճանապարհի վրա։

ԼԵՍՈՒՆԻ, 4 սեպտ. (Բէյտէր)։ Ռուսները խուզարկութիւններ են կատարում հապտանական ճակատի դատաւորութեան մասին հեծելազօրքի մեծ ոյժերով, աշակցված արտիլերիայով։ Երեկ երեկոյան նրանք մօտեցան երեք թիւանոթներով Եանտայ կայարանին 6000 մէտր տեղ և մի քանի ուսման արձակեցին։ Հրաձգութիւնը շարունակվեց ընդմիջումներով ամբողջ օրը։ Ռուսաց զօրքերը տեղաւորված են Մուկլէնի ճանապարհի վրա։

ՏՕԿԻՐ, 9 սեպտ. (Բէյտէր)։ Թէն պաշտօնական հաստատութիւն զեռ չը կայ, բայց, ըստ

երկոյթին հաւաստի է, որ հապտանայինները գրաւել են Կուրօպատկինի ամրոցը և ուրիշ բարձրութիւնները Իտալից արեւմուտը, որոնք նրանք վերցրին յուսահատական շտաբայով։ Ռուսների բոլոր փորձերը նորից գրաւել դիրքերը, յետ մղվեցին։

ՏՂԻՆԻՆ, 9 սեպտ. (Բէյտէր)։ Արգէն 10 օրից ի վեր այստեղ կանգնած են մի քանի ամիսային նաւեր։ Ենթադրում են, որ բոնն սահմանված է Պորտ-Արտուրի համար։ Մովսէս Մատուսէվիչ դուրս եկաւ հիւանդանոցից, միւս ուսու վիրաւորները արագաբար առողջանում են։

ՎիՆԱ, 9 սեպտ.։ Արձանի բացման նախընթաց օրը Լիտվայի և Վիլնայի արքեպիսկոպոս Նիկանդորսը կատարեց հոգեհանգիստ ի յիշատակ Եկատերինէ կայսրուհու։ Քաղաքը տօնախմբական տեսք ունի։

ՇԱՆԻՆԻՆ, 9 սեպտ. (Վօլֆ)։ Ֆրանսիական միսիոնարների սպանութեան համար Իտալիայում Զինաստանը համաձայնեց պատժել կամ վարչական տուգանքների ենթարկել մի ամբողջ շարք պաշտօնեաների, ինչպէս և կառուցանել հիւանդանոց։ Դրամական վարձատրութեան հարցը դեռ որոշված չէ։

ՊԱՐԻՉ, 9 սեպտ. (Հալա)։ Զինական կառավարութիւնը ներուսն ինչպէս ֆրանսիական դեսպանութիւնից այն միջնադէպի առիթով, որի ժամանակ չինական զինուորներ, զինաւորված մահակներով, յարձակվեցին դեսպանատան կցորդ մայր կարիքի վրա։

ԴԻՆԶԻՆ, 9 սեպտ. (Վօլֆ)։ Մի քանի օրից ի վեր Թաւալորը տանջվում է բրօնիսային կատարով. նա դուրս չէ գալիս պալատից։ Տեղը չը կայ։

10 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ։ Վերջնականապէս դադարած է համարվում Պետերբուրգում պողպատեղի վէրա Ալեքսանդրովիչ Մոսկալովային թոյլատրված «Научное Общество» ամսագրի հրատարակութիւնը։

ՕՂԻՍԱ, 9 սեպտեմբերի։ Առաւօտեան բուլվարով անցնող քաղաքային Նէյդգարտի վրա յարձակում գործեց մի անյայտ անձն, որը ընկավ։ Կրակից նրա վրա, բայց վրէպեց։ Քաղաքային նրան բռնեց և զինաթափ արեց, այնպէս որ նրա մօտ գտնվեց բացի ընկնելից, խանգալ ևս։ Յանցաւորի անձնաւորութիւնը դեռ չէ պարզված, նա յամառութեամբ լուր է։

ՎիՆԱ, 9 սեպտեմբերի։ Արքեպիսկոպոս Նիկանդր հոգեհանգիստեան պատարագ մատուցեց և հանդիսաւոր հոգեհանգիստ կատարեց Եկատերինա II-ի համար։ Տաճարում ներկայ էին ներքին գործերի մինիստրը, Վիլնայի շրջանի զօրքերի հրամանատարը, գեներալ-տէտը, առանձին մասերի գլխաւորները, շատ գաւառների տառուտէրներ, 6 նահանգապետներ և եկուր շատ ազգայնականութիւն։ Տաճարի մուտքի մօտ բոլորին բաժանվում էին գեներալ Բազիսովիչի հրատարակած բրօշիւրները և պատկերները, իսկ երեկոյան պալատում կայացաւ «Ռուսական ժողովարանի» անդամների տեղական դաշնակցութեան բաղժամարդ նիստը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ։ Համաձայն ստացված բացատրութիւնների, որ «Բէյտէրի գործակալութիւնը» հաղորդեց լրագրիւններին Շանցայից, Լէսսարի միջնորդութեան մասին չինական կառավարութեան առաջ մանջուրական երկաթուղին Զինաստանի համար ձեռք բերելու դուրք է հիմքից։

ՊԱՐԻՉ, 9 սեպտ.։ Մուկլէնից հարաւ Պայտապուլից և Սուսիայից երեկ ուսուական մեծ ժամն զօրապետը խուզարկութիւն արեւ, որպէս զի պարզեւ այն հարցը, թէ անհրաժեշտ է արդեօք, հապտանային շարժումների համաձայն, աւելի արագ կըրպով կենտրոնացնել ուսուական զօրքերը իմանիւլի աշ ափին։ Ուղարկութիւնները պարզել են, որ հապտանայինները մի քանի օր առաջ ստացել են նրա շանաւոր օժանդակ ոյժերը։

ԼԱՍՊԱՆԻՆ, 9 սեպտեմբերի (Բէյտէր)։ «Տերեկ» կրէյսէրը սկսեց ամուլս բռնել։ Առաւօտեան ժամի 3-ին իշխանութիւնները ստացան հրաման արգելել ամուլը, չուր և մթերքներ տալը և «Տերեկի» լեռնաւորումը իսկոյն դադարեցրեցին։ Նրան հրամայված է դուրս գալ նաւահանգստից այսօր առաւօտեան։ Սակայն նաւը չէ կարող կատարել այդ հրամանը, քանի որ մեքենաները վերանորոգում է կատարում։

ՄՈՒԿԼԵՆ, (Հաղորդված է Բերլինի վրայով)։ 9-ին սեպտեմբերի Իւրաքանչիւր ժամ սպասվում է պատերազմի սկիզբը։ Ենթադրում են, որ առաջին ընդհարումը տեղի կունենայ Ֆուշու

